
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՎԱՏԱՄՔ
(Մագդա Ջանփոլադյանի ծննդյան 75 և գրական-մանկավարժական գործունեության 50-ամյակների առթիվ)

Լրացավ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) բազմամյա դասախոս, անվանի գրականագետ, 1984-ից Հայաստանի գրողների միության անդամ Մագդա Ջանփոլադյանի ծննդյան 75-ամյակը:



Մագդա (Մագդալինա) Գևորգի Ջանփոլադյանը ծնվել է 1942 թ. նոյեմբերի 24-ին Երևանում՝ մեծահարուստ բարեգործ, հայ մշակութային գործիչ Եսայի Ջանփոլադյանի որդու՝ Գևորգ Ջանփոլադյանի ընտանիքում: Ե. Ջանփոլադյանը հիմնել էր Երևանի առաջին նշանավոր “Ջանփոլադյան թատրոնը”, ուր ելույթ է ունեցել Կոմիտասի երգչախումբը, իսկ 1913-ին առաջին անգամ այդտեղ է ներկայացվել Արմեն Տիգրանյանի “Անուշ” օպերան: Մագդային բախտ չվիճակվեց տեսնել իր պապիկին, քանի որ նա Էջմիածնի որբերի խնամքով զբաղվելիս, նրանցից վարակվեց անբուժելի հիվանդությամբ և 1918 թ. իր մահկանացուն կնքեց՝ որբ թողնելով իր 9-ամյա որդուն՝ Գևորգին:

1959 թ. ավարտելով Երևանի Շնչենկոյի անվան թիվ 42 դպրոցը՝ Մ. Ջանփոլադյանն ընտրեց բանասերի մասնագիտությունը. 1964 թ. ավարտեց ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության բաժանմունքը, 1967-ին՝ ասպիրանտուրան՝ “Հայ գրականություն” մասնագիտությամբ: 1968 թ. պաշտպանեց թեկնածուականատենախոսություն՝ “Թումանյանը և ժողովրդական էպոսը” թեմայով, իսկ 2007-ին՝ դոկտորականատենախոսությունը՝ “Հայ միջնադարյան գրական հուշարձանները (Մասունցի Դավիթ”, “Մատյան ողբերգության”) ռուսերեն թարգմանություններում և քննադատության մեջ” խորագրով:

Մ. Ջանփոլադյանի առաջին ուսումնասիրությունը՝ “Թումանյանը և ժողովրդական էպոսը”, լուրջ ավանդ է թումանյանագիտության ասպարեզում: Առաջին անգամ գիտական բարձր մակարդակով վերլուծվեց “Մասունցի Դավիթի” թումանյանական մշակումը: Հեղինակը վստահորեն մուտք

գործեց թե՛ թումանյանագիտության, թե՛ էպոսագիտության և թե՛ թարգմանական արվեստի խնդիրների ոլորտ ու տասնամյակներ շարունակ հավատարիմ մնաց գրականագիտության մեջ իր նախընտրած այդ ուղիներին ու թեմաներին:

25-ամյա գրականագետը կարողացավ թափանցել Թումանյանի ստեղծագործական աշխարհի բարդությունների մեջ և գիտական ծանրակշիռ փաստերով բացահայտեց բանաստեղծի ըմբռնումների խորությունն ու արժանի արդյունքների հասավ՝ որոշակի ավանդ բերելով թումանյանագիտության բնագավառում: Իսկ երբ «Թումանյանը և ժողովրդական էպոսը» աշխատությունը դրվեց ընթերցողի սեղանին, ընդ որում՝ հոբելյանական տարում՝ 1969 թ., միանգամից արժանացավ թումանյանագետների ու բանագետների, ինչպես նաև՝ ընթերցող լայն հասարակության ջերմ ու բարձր գնահատականներին: Ուշագրավ է, որ գրքի առաջին գրախոսներից ու ողջունողներից էր ՀՄՄՀ ԳՄ թղթակից անդամ Ա. Ղանալանյանը, ով բացի մենագրությունն ըստ ամենայնի արժևորելուց՝ նկատեց հեղինակի բանավիճելու կուլտուրան. «Անգամ այնպիսի դեպքերում, երբ նա գործ ունի ուրիշի կողմից թույլ տրված աղաղակող անհեթեթության, փաստերի աղավաղման, անտեղյակության ու կոպիտ սխալի հետ, նրա քննադատական խոսքը չի անցնում պատշաճության սահմանները... Մ. Ջանփոլադյանը ստեղծել է մի նոր ու արժեքավոր աշխատություն»¹:

1967 թ. Մ. Ջանփոլադյանն աշխատանքի անցավ ԵՊՀ-ում՝ իբրև դասախոս՝ նախ Հայ գրականության ամբիոնում, ապա՝ 2007-ից Էդ. Ջրբաշյանի հիմնած գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնում՝ շարունակելով վարել հայ գրականության պատմության դասընթացը՝ ռուս բանասիրության ֆակուլտետում, ինչպես նաև՝ զանազան հատուկ դասընթացներ՝ բակալավրիատում ու մագիստրատուրայում՝ նվիրված թե՛ թումանյանագիտության, թե՛ հայ-ռուս գրական կապերին, թարգմանության տեսության և պրակտիկայի խնդիրներին:

Թե՛ իբրև մարդ և թե՛ իբրև գիտնական Մ. Ջանփոլադյանը կես դար շարունակ ուսանողների սերունդներ է կրթել ու դաստիարակել իր արդարացիությամբ, վարակիչ սկզբունքայնությամբ: Նա յուրօրինակ կամուրջ է հայ և ռուս մշակույթների ու գրականության միջև և իր լուման է ներդրել նաև Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի ուսանողության կյանքում: 2002 թ. մինչև 2008 թ. այդ համալսարանում նա նաև Լևոն Մկրտչյանի ան-

¹ «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, -3, էջ 244:

վան գրական և մշակութային կապերի ու նախաձեռնությունների կենտրոնի գիտական ղեկավարն էր:

Մ. Ջանփոլադյանը հեղինակ է մի շարք մենագրությունների և ժողովածուների՝ «Թումանյանը և ժողովրդական էպոսը» (1969), «Когда строку диктует чувство» (2006), «Давид Сасунский» в русских переводах и критике» (2012), «Книга скорби» Нарекаци в русских переводах и критике» (2012), «Մաւունցի Դավթի» ռուսական կյանքը՝ և 150-ից ավելի գիտական հոդվածների՝ տպագրված ինչպես տեղական, այնպես էլ՝ արտասահմանյան հեղինակավոր ամսագրերում ու գիտական ժողովածուներում («Литературная Россия», «Вопросы литературы», «Литературное обозрение», «Дружба народов» «Књижевне новине», «Књижевност» ամսագրերում, «Памятные книжные даты» ժողովածուում, «Тригор Нарекаци и духовная культура Средневековья» գրքում և այլն):

Մ. Ջանփոլադյանի գիտական նախասիրությունների ոլորտում մշտապես առկա է եղել Թումանյանը՝ ինչպես բանահյուսական ակունքների հետ իր սերտ կապվածությամբ, այնպես էլ՝ թարգմանական ժառանգությամբ: Արդեն հինգ տասնամյակ նա զբաղվում է գեղարվեստական թարգմանության տեսության և կոնկրետ թարգմանությունների վերլուծությամբ: Գրականագետի բազմաթիվ ուսումնասիրություններ վերաբերում են հայերենից ռուսերեն և ռուսերենից հայերեն գեղարվեստական թարգմանությունների գնահատության հարցերին: Այս բնագավառում նա ունի բացառիկ կարևոր ու նշանակալից դեր և ստեղծել է մնայուն գիտական արժեքներ: Ուշագրավ է, որ Մ. Ջանփոլադյանն անդրադարձել է ռուս այն թարգմանիչներին և գրողներին, ովքեր առանձնահատուկ սեր են տածել Հայաստանի ու հայ մշակույթի հանդեպ, բանաստեղծություններ են ձոնել մեր երկրին, ժողովրդին, մեծ պատասխանատվությամբ են մոտեցել հայ դասականների թարգմանություններին: Այսպես, Ջանփոլադյանն առանձին հետազոտություններ և հոդվածներ է նվիրել Վալերի Բրյուսովին, Վերա Չվյազինցևային, Մարիա Պետրովիսին, Ելենա Նիկոլանսկայային, Միխայիլ Մատուսովկուն, Միխայիլ Դուդինին, Մամուել Մարշակին և այլոց: Նաում Գրեբնը Մագդային համարում է այն քերից, որոնց շնորհիվ Հայաստանի հանդեպ իր սերը փոխադարձ եղավ, և եթե Հայաստանում նրանից բացի ոչ ոք իրեն չգնահատեր, միայն Մագդայի կարծիքն իր համար բավարար կլիներ: Նիկոլայ Լյուբիմովն անվերջ պահանջում էր, որ Մագդան գիրք գրի գեղարվեստական թարգմանության մասին: Մ. Ջանփոլադյանն անդրադարձել է հատկապես Ն. Լյուբիմովի, Ն. Գրեբնի, Ա. Նալբանդյանի և այլ թարգմանիչների՝ հայ գրողներից, մասնավորապես, Նարեկացուց, Քուչակից, Կոս-

տանդին Երզնկացուց, Թումանյանից, Չարենցից, Տերյանից կատարած թարգմանություններին: Իրենք՝ ռուս թարգմանիչները, բարձր են գնահատել Մ. Ջանփոլադյանի ներդրումը: Նա կարողացավ մեծ չափով օգտակար լինել ներկա և ապագա թարգմանիչներին Թումանյանի երկերի փիլիսոփայական ու գեղարվեստական իմաստային խորքն ընկալելու հարցում: Քիչ չեն գրականագետի այն հետազոտությունները, որտեղ հայ գրողները, հատկապես Խ. Աբովյանն ու Հովհ. Թումանյանը, ներկայանում են ռուս գրականագիտական մտքի գնահատությամբ:

Մ. Ջանփոլադյանի ուսումնասիրությունների շնորհիվ հայ ընթերցողը ծանոթացավ ռուս գրականության մեջ հայոց Մեծ Եղեռնի արձագանքներին², Հայաստանի կերպարին 1970–80-ական թվականների ռուս պոեզիայում և այլն: Տասնամյակներ շարունակ նա ստեղծել է հայ գրականագիտության մեջ թարգմանության տեսության և պատմության հարցերին նվիրված լավագույն էջերն ու առանձնացել է այդ ասպարեզում իր անուրանալի, բացառիկ դերով՝ լրացնելով մեզանում մինչ այդ եղած բացը:

Գրականագետը միաժամանակ Թումանյանի ու Իսահակյանի մի շարք հոդվածների ռուսերեն թարգմանիչն է և ռուս ընթերցողի սեփականությունն է դարձրել Թումանյանի հրապարակագրության լավագույն նմուշները: Կազմել և ծանոթագրել է Թումանյանի («Ованес Туманян. Избранное», 1988), Դանիել Վարուժանի ռուսերեն ժողովածուները (1985), նաև Արևմտահայ պոեզիայի ռուսերեն անթոլոգիան (1983) Ա. Շարուրյանի հետ համատեղ:

Առաջինը Մ. Ջանփոլադյանը Բելգրադում լույս տեսնող «Книжежность» ամսագրում ներկայացրեց Թումանյանի ու սերբական էպոսի առնչությունները, ընդգծեց հայ և սերբ էպոսների գրապատմական ու քաղաքական աղերսները՝ մեկ անգամ ևս բարձրաձայնելով ընդհանուր թշնամու դեմ պայքարելու՝ հայերի ու սերբերի ազատագրական պայքարի ոգին³:

Մ. Ջանփոլադյանը հեղինակն է նաև «Ованес Туманян и русская литература» ուսումնամեթոդական ձեռնարկի: Նա շարունակում է թումանյանագիտության ասպարեզում իր որոնումները, անդրադառնում թումանյանական հանճարեղ թարգմանությունների նոր փորձերին, թումանյանական արվեստի վերստեղծման ամենատարբեր խնդիրներին⁴:

Մեկ անգամ չէ, որ Մ. Ջանփոլադյանը հայ և ռուսալեզու ընթերցողին ներկայացրել է հայ-ռուս գրական կապերի պատմության ուշագրավ ու ա-

² «Պայքար», 1995, թիվ 67:

³ Տե՛ս «Ազգ», 20. XI. 1998:

⁴ Տե՛ս «Չմեռվա իրիկունը» մեկ դար անց».- «Նորք», 2011, թիվ 3, էջ 130–140:

մենավառ էջերը, արծարծել բանագետներին, թարգմանիչներին հուզող արդի խնդիրներ: Այդ է վկայում 2012 թ. հրատարակած նրա “Մասունցի Դավթի” ռուսական կյանքը” մենագրությունը: Գրականագետի վերլուծություններն արվել են “Մասունցի Դավթի” վերաբերյալ արդի գիտաքննադատական մտքի մակարդակի, թարգմանության տեսության ժամանակակից խնդիրների հաշվառումով, ինչը հնարավորություն է ընձեռել ներկայացնելու դարաշրջանի ազդեցությունը թարգմանությունների և քննադատության բնույթի, բովանդակության ու որակի վրա: Հեղինակն իր այս աշխատությամբ նպաստում է ազգային ստեղծագործության միջազգայնացմանը և դրանով իսկ վերահաստատում մեր էպոսի համամարդկային արժեքը: Նա ցուցադրեց, թե ինչպես Խորհրդային Միության վիթխարի տարածքի վրա ռուսալեզու գրական միջավայրում խոսվեց հայկական էպոսի համաշխարհային նշանակության մասին: Ռուս քննադատները վկայեցին մեր էպոսի հումանիստական ոգու, թշնամու հանդեպ կույր, ազգայնական ատելության, ազգային բացառիկության և անհանդուրժողականության բացակայության մասին:

Մ. Ջանփոլադյանի բոլոր ուսումնասիրությունները նաև ընթերցման հաճույք են պատճառում և աչքի են ընկնում շարադրանքի պարզությամբ, հստակ, սեղմ ու անսերնետ գիտական ոճի գրավչությամբ: Թումանյանն ինքն իրեն բնորոշում էր “ջնջելական”. այդպիսին է նաև Մ. Ջանփոլադյանը: Ակադեմիկոս Լ. Մկրտչյանը Մագդային նվիրած գրքի մակագրության մեջ գոհունակություն է հայտնում, որ իր գրքի երիտասարդ խմբագիրը խնայել է իրեն և պահպանել 465 էջերը:

Վաստակաշատ գրականագետի գործունեությունը բազմիցս արժանացել է խրախուսանքի ու կառավարական բարձր գնահատանքի: Նա արժանացել է Ռուսաստանի մունիցիպալ ակադեմիայի Մ. Շոլոխովի անվան շքանշանի (2004), Հայաստանի գրողների միության և Հայ-ռուսական (Մլավոնական) համալսարանի համատեղ սահմանած Լ. Մկրտչյանի անվան գրական մրցանակի (2010), պարգևատրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության հուշամեդալով (2012), Ռուսաստանի գրողների միության, Մոսկվայի գրողների կազմակերպության Մ. Յու. Լերմոնտովի անվան մեդալով, նաև՝ “Մովսես Խորենացու” մեդալով (2014):